Հետադարձ կապի ապահովումը՝ որպես ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց, ձևերն ու եղանակները

Կարապետյան
Սուսաննա Ռաֆիկի

Հետադարձ կապը կարող է լինել բանավոր, գրավոր կամ թվային ձևով: Ավելի քիչ արդյունավետ է կարճաժամկետ հետադարձ կապը, որն արտահայտվում է սովորողների գիտելիքների միջանկյալ կամ վերջնական վերահսկողության մեջ:

Հետադարձ կապը սովորողներին տրամադրվող տեղեկատվություն է, որը պետք է օգնի սովորողներին հասնել իրենց ուսումնական նպատակներին: Այն պետք է ուղղված լինի աշակերտների ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

ԳԻՏ

Հետադարձ կապը քննարկելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել երկու հիմնական ասպեկտների վրա. ինչ ազդեցություն է ունենում հետադարձ կապը ուսուցչի և աշակերտի համար:

Ըստ Օ.Վ. Օլեշչուկի հետադարձ կապը պետք է ունենա հետևյալ հատկությունները.

- հավասարակշռություն,
- կոնկրետություն,
- օբյեկտիվություն,
- համապատասխանություն,
- հասկանալիություն
- հետևողականություն,
- համեմատելիություն
- բովանդակայնություն,
- բավարարություն,
- կառուցվածքայինություն,
- Արդիականություն:

Ուսուցման գործընթացում առաջին հերթին ոչ թե գիտական հետազոտություններ և խորապես գրված մեթոդական առաջարկություններն են առաջնային, այլ ուսուցիչն ինքը պետք է գնահատի դրական օգուտները, որոնց նպատակը ուսումնառության արդյունքների բարելավումն է:

Ներկայիս պրակտիկան ցույց է տալիս, որ ուսուցիչներն իրենց գործունեության ընթացքում օգտագործում են գնահատողական և նկարագրական հետադարձ կապի ձևեր:

Գնահատող հետադարձ կապը սովորողներին տրամադրում է միայն որոշ տեղեկություններ ընդհանուր մեկնաբանությունների տեսքով, բայց աշակերտներին չի տալիս ուղեցույց այն մասին, թե ինչը պետք է բարելավվի և ինչպես կարելի է դրան հասնել:

Նկարագրական հետադարձ կապը ուղղակիորեն կապված է ակնկալվող արդյունքի և գնահատման չափանիշների հետ: Այն սովորողներին տրամադրում է ուղեցույց, առաջարկություններ, խորհրդատվություն աշխատանքի որակի բարելավման համար անհրաժեշտ հաջորդ քայլերի վերաբերյալ:

Իրականում արդյունավետ հետադարձ կապի ապահովումը բարդ խնդիր է, որը ենթադրում է հետևել տարբեր կետերի:

Հետադարձ կապը պետք է լինի ժամանակին: Երբ հետադարձ կապը տրվում է գիտելիքի ստուգումից անմիջապես հետո, սովորողը դրական է արձագանքում և վստահորեն հիշում է իր սովորածը: Եթե շատ երկար սպասել հետադարձ կապ տալու համար, պահը կկորչի, և աշակերտը կարող է չկապել հետադարձ կապը գործողության հետ:

- հետադարձ կապը աշակերտներին տրամադրվող տեղեկատվություն է, որը պետք է օգնի նրանց հասնել իրենց առջև դրված ուսումնական նպատակներին,
- կարելի է ասել, որ հետադարձ կապը սովորողների ուսուցման գործընթացը վերահսկող ու ղեկավարող արդյունավետ գործիք է,

- հետադարձ կապը կարող է լինել բանավոր, գրավոր կամ թվային ձևով,
- հետադարձ կապի ազդեցությունը հիմնականում դրական է, սակայն դա կարող է ունենալ նաև բացասական հետևանքներ ուսուցչի ոճ կոմպետենտ լինելով պայմանավորված,
- հետադարձ կապը իր ազդեցությունը ունենում է երկկողմանիորեն. ուսուցչի վրա և աշակերտի վրա,
- ուսուցման գործընթացում առաջին հերթին ոչ թե գիտական հետազոտություններ և խորապես գրված մեթոդական առաջարկություններն են առաջնային, այլ ուսուցիչն ինքը պետք է գնահատի դրական օգուտները, որոնց նպատակը ուսումնառության արդյունքների բարելավումն է,
- այսօր ուսուցիչներն իրենց գործունեության ընթացքում օգտագործում են գնահատողական և նկարագրական հետադարձ կապի ձևեր,
- արդյունավետ հետադարձ կապի ապահովումը ենթադրում է կոմպետենտ ուսուցչի կողմից մշակված եղանակներ ու միջոցներ, որոնց վերջնարդյունքը կլինի ուսումնառության մակարդակի բարձրացում:

- աշակերտների ձեռքբերումները բարելավելու հետագա ջանքերի համար ուսուցիչը պետք է նկարագրական հետադարձ կապ տա,
- հետադարձ կապը պետք է լինի կոնկրետ, պարզ և հասկանալի
- գնահատման ժամանակ ճիշտ չէ աշակերտների գործողությունները գնահատել «ճիշտ» կամ «սխալ» բառերով, այլ ավելի արդյունավետ է տալ մանրամասն մեկնաբանություններ,
- համեմատել է հարկավոր այն, ինչ անում է աշակերտը այս պահին, և այն, ինչ նա սխալ է արել նախկինում,

Առաջարկություններ

- պետք է կոնկրետ ցուցումներ տալ, թե ինչպես կատարելագործվել, այլ ոչ թե պարբերաբաբ մատնանշել սխալները,
- անչափ կարևոր է յուրաքանչյուր աշակերտի անհատականությունը հաշվի առնել, առավել արդյունավետ կլինի, եթե ուսուցիչը կենտրոնանա մեկ կարողության կամ հմտության վրա, քանի որ երբ միայն մեկ հմտություն է քննադատվում, դա շատ ավելի է ազդում աշակերտի վրա, քան երկար տեքստը, որը թվարկում է աշխատանքի բոլոր թերությունները,
- ճկուն կրթական համակարգի դեպքում արդյունավետ կլինի այլընտրանքային ժամկետներ սահմանել աշակերտների/դասերի համար,
- արդյունավետ է նաև սովորեցնել աշակերտներին, թե ինչպես հետադարձ կապ տալ միմյանց և ուսուցչին,
- արդյունավետ կլինի, եթե յուրաքանչյուր մանկավարժ առանձնացնի մի նոթատետր, որում նշումներ կատարի իր աշակերտներից յուրաքանչյուրի մասին:

Շնորհակալություն ուշադրության համար